



Հ Ր Ա Չ Յ Ա Զ Ո Չ Ա Ր
(1909—1965)



Երկարատև և ծանր հիվանդությունից հետո; մայիսի 3-ին, վախճանվեց սովետահայ արձակի ականավոր ներկայացուցիչ, գրող Հրաչյա Քոչարը (Գաբրիելյան):

Քոչարը ծնվել է 1909 թվականին, Արևմրտյան Հայաստանի Ալաշկերտի շրջանի Ղումլիպուճախ գյուղում: 6 տարեկան հասակում, 1915 թվականին, տարագրության ճանապարհի վրա կորցրած ծնող ու հարազատներ, գաղթական հայ ժողովրդի տնավեր բեկորների հետ հասնում է էջմիածնի գավառ: Ապա սովորում է Հոկտեմբերյանի շրջանի բամբակագործական տեխնիկումում, ավարտում Երևանի բանվորական ֆակուլտետը և կատարելագործվում գրողների միության կից բացված համալսարանում:

Սկսել է գրել պարբերական մամուլում մի շարք ակնարկներ և պատկերներ ուսանողական տարիներից, 1930-ական թվականներից:

Նրա առանձին գրական ստեղծագործությունները արդեն աչքի էին ընկնում խոսքի, մտքի ու ձևի ինքնատիպությամբ ու կատարելությամբ:

1934 թվականին լույս է տեսնում Քոչարի «Վահան Վարդյան» վիպակը, 1937 թվականին՝ «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» երգիծական վեպը: 1941 թվականին հրատարակվում է Քոչարի «Ժամանակներ» վերնագրով վիպակների և պատմվածքների ժողովածուն:

Քոչարի գրական տաղանդը առնականանում և խորանում է ռազմաճակատից գրած նրա հայրենաշունչ պատմվածների և ակնարկների մեջ, որոնք ամփոփվում են «Նախօրյակին» և «Սրբազան ուխտ» ժողովածուներում: Քոչարը հայրենասիրական թեման ավելի լայն կերպով արտացոլում է պատերազմի հաղթական ավարտից հետո, «Մեծ տան զավակները» վեպում:

Քոչարի անունը անխղճորեն կապված է մեր գրականության մի ամբողջ ժամանակաշրջանի հետ: Ավելի քան 35 տարի նա եռանդուն կերպով մասնակցել է ժամանակակից մեր գրական, հասարակական կյանքին, մեր ժողովրդի հոգևոր մշակույթի ստեղծման և Կարգացման շնորհակալ գործին:

Նրա ողջ ստեղծագործության մեջ վառ կերպով արտահայտվում են կյանքը գեղարվեստորեն ընկալելու և ճշմարտացի ձևով վերարտադրելու հզոր շունչը և հայրենասիրությունը:

Քոչարը ապրում է իր ժամանակի մեջ և իր ժողովրդի կյանքով, նրա նվիրական հույսերով, ձգտումներով, նրա հաղթանակներով և մտահոգություններով: Նա ժամանակի և կյանքի մարդ էր իր կենսասիրությամբ, իր լավատես փիլիսոփայությամբ, իր հումորով և վաղվա նկատմամբ վառ հավատով:

Քոչարը նոր էր բուլոբել իր կյանքի 55-րդ գարունը, երբ մահացավ գրիչը մատների մեջ, իր հասունության կատարին, իր ստեղծագործական ուժերի ծաղկուն օրերին, երբ դեռ շատ քան ուներ ասելիք իր ժողովրդին ու մեր գրականության: Նրա վերջին գործը՝ «Սպիտակ գիրք»-ը, նշանավորում էր գաղափարական ու գեղարվեստական բարձր որակ մեր արձակի մեջ: Ահա թե ինչու՞ Քոչարի մահը ծանր կորուստ է մեր գրականության համար:

Ժողովրդի հարազատ զավակն էր նա, դարձավ ժողովրդի նույնքան հարազատ ու սիրասուն գրողը:

Քոչարի պայծառ անունն ու հիշատակը միշտ կապրեն մեր ժողովրդի սրտում և հայ գրականության մեջ:

Հարգանք իր հիշատակին, հարգանք իր գործին:

